



Tempus



Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)

Շրջանավարտների պրոֆայլի հաշվետվություն

*Հեղինակներ՝ Մամիկոն Թոսունյան, Արշալույս Հովհաննիսյան, Ռուբեն Մարկոսյան  
ԵՊՀ HEN-GEAR հետազոտական խումբ*

Երևան - 2015

**Բովանդակություն**

Ներածություն .....2

1. Շրջանավարտների սոցիալ-ժողովրդագրական տվյալները **Error! Bookmark not defined.**
2. ԵՊՀ ուսանողների լեզվական հմտությունները ..... **Error! Bookmark not defined.**
3. Ուսանողների SS հմտությունները ..... **Error! Bookmark not defined.**
4. Տեղեկատվություն բուհի և շրջանավարտների գործունեության և իրազեկության վերաբերյալ ..... **Error! Bookmark not defined.**
5. Շրջանավարտների բավարարվածությունը կրթական գործընթացով ..... **Error! Bookmark not defined.**
6. Շրջանավանտների ակտիվությունը և նրանց մոտեցումները ըստ սեռերի..... **Error! Bookmark not defined.**

Եզրակացություն..... **Error! Bookmark not defined.**

## Ներածություն

ԵՊՀ շրջանավարտների պրոֆայլ հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) փորձնական հետազոտություն է, որը կատարվել է «Բարձրագույն կրթական ցանց՝ ուղղված Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների աշխատունակությանը» (HEN-GEAR) «Տեմպուս» ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է պահպանել բարձրագույն կրթության բարեփոխումների և արդիականացման գործընթացը Արևելյան գործընկերության տարածքում՝ աջակցելով որակի գնահատմանը և շրջանավարտների զբաղվածության հարցի լուծմանը Հայաստանում:

Նախագիծն աջակցում է հայաստանյան բուհերին գործիքների և մեթոդաբանությունների բացահայտման հարցերում, որոնք ուղղված են բարելավելու կրթական համակարգի արդյունավետությունը շրջանավարտների տվյալների HEN-GEAR համակարգի ներդրման միջոցով՝ կիրառելով Իտալիայի AlmaLaurea համալսարանների կոնսորցիումի կողմից առաջարկված մոդելը (Իտալիա, Բոլոնիա), և ունի երկու հիմնական նպատակ:

HEN-GEAR համակարգի ներդրման նպատակները հետևյալն են.

- աջակցել որակյալ գնահատման փորձի արդյունավետությանը շրջանավարտների հուսալի վիճակագրական տվյալների հիման վրա, ինչպես նշված է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) կողմից,
- լրացնել առկա վիճակագրության բացերը,
- հեշտացնել շրջանավարտների մուտքը աշխատաշուկա ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով,
- համախմբել համալսարանների և ընկերությունների միջև առկա հարաբերությունները ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով,
- բարձրացնել ազգային համալսարանական համակարգի արժեքը՝ որպես մի ամբողջություն:

Շրջանավարտների պրոֆայլային զեկույցի պարբերական զարգացումը կարևոր տարր է HEN-GEAR համակարգի արդյունավետ գործունեության համար: Զեկույցի զարգացման նպատակներն են՝

- ներկայացնել և վերլուծել շրջանավարտների առաջադիմության տվյալները և ուրվագծել հիմնական հատկանիշները,
- ապահովել տեղեկությունները նրանց համար, ովքեր ներգրավված են բուհի կրթական համակարգի հետագա առաջընթացի համար մշակվող ԵՊՀ զարգացման քաղաքականության գործընթացում,
- ապահովել գործիքներ համալսարանի ուսումնական ծրագրերի մշակման և ընտրության համար,
  - բարելավել HEN-GEAR համակարգն ընդհանրապես և շրջանավարտների հարցաթերթիկները մասնավորապես:

Ուսումնասիրությունը կարող է կենտրոնացվել մի շարք փոփոխականների վրա՝ հիմնված առցանց հարցաթերթիկի վեց կոմպլեկտների վրա, որն օգտագործվում է շրջանավարտների հարցազրույցների համար:

Հարցաշարում ներառված են հետևյալ վեց կոմպլեկտները.

1. անձնական տվյալներ,
2. կրթություն և ուսուցում,
3. տեղեկություններ կուրսի մասին, որ շրջանավարտն ավարտում է,
4. կուրսի գնահատում, որ շրջանավարտն ավարտում է,
5. տեղեկություններ ընտանիքի մասին,
6. ապագա մտադրությունները և հեռանկարները:

Զեկույցը ԵՊՀ շրջանավարտների տվյալների առաջին վերլուծությունն է՝ հիմնված HEN-GEAR տվյալների բազայի վրա: Այս զեկույցը կարելի է դիտարկել որպես պիլոտային գործունեություն, որը նույնպես նպատակ ունի իրականացնել

HEN-GEAR տվյալների բազայի համակարգի վերլուծություն: Շրջանավարտների պրոֆայլային ընդհանուր և ավելի համապատասխան տեղեկատվությունը հնարավոր է ստանալ շրջանավարտների արձագանքներից (գրանցված շրջանավարտների բարձր տոկոս և պատշաճ կերպով լրացված հարցաթերթիկներ):

Շրջանավարտների նմուշառումը կատարվել է ցանկում տեղ գտած կարևոր հարցերի հիման վրա, հատուկ ընտրված այս զեկույցի համար: Ջեկույցի առավել կարևոր հարցերն են.

- ծնողների կրթական որակավորում,
- ուսուցման և թրեյնինգի մեթոդների գնահատում,
- արտասահմանում սովորելու փորձ,
- աշխատանքային փորձը համալսարանում սովորելու ընթացքում,
- համալսարանական փորձի ընդհանուր առմամբ գնահատումը,
- ուսումը շարունակելու մտադրությունը:

Ջեկույցի համար իրավունակ հարցաթերթիկներն ընտրվել էին բացառման չափանիշները կիրառելու միջոցով: Մասնավորապես հարցաշարի ամբողջականության չափանիշը բավարարված է համարվում, եթե շրջանավարտը ներկայացրել է համապարփակ տեղեկատվություն առնվազն վերը նշված 3 հարցերի և 6 կարևոր հարցերի վերաբերյալ:

Ջեկույցը պարունակում է ԵՊՀ 190 շրջանավարտների հատկանիշների և կատարողականի վերլուծություն: 2014 թ.-ի ընթացքում HEN-GEAR-ում ընդհանուր 297 գրանցված շրջանավարտներից ընտրվել է 190 շրջանավարտների պրոֆայլ՝ հաշվի առնելով վերոնշյալ չափանիշը:


Ջեկույցը ներառում է հետևյալ 6 գլուխները.

1. շրջանավարտների սոցիալ-ժողովրդագրական տվյալները,
2. շրջանավարտների լեզվական հմտությունները,
3. շրջանավարտների SS հմտությունները,

4. տեղեկություններ բուհի և շրջանավարտների գործունեության և իրազեկության մասին,
5. շրջանավարտների գոհունակությունը կրթական գործընթացից,
6. շրջանավարտների ակտիվությունը և նրանց դիրքորոշումը կրթության հանդեպ գենդերային հիմքի վրա:

### 1. Շրջանավարտների սոցիալ-ժողովրդագրական տվյալները


Hen-Gear ծրագրի շրջանակներում անցկացված պիլոտային հետազոտությանը մասնակցել է ԵՊՀ-ի 190 ուսանող, որոնցից 89.5%-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 10.5%` արական (*Նկար`1*)



*Նկար 1. Շրջանավարտների գենդերային բաշխվածություն*

Շրջանավարտների գենդերային բաշխումը տատանվում է ֆակուլտետից ֆակուլտետ, բայց վերը նշված պատկերը չի արտացոլում շրջանավարտների իրական գենդերային բաշխումը: Սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այն ֆակուլտետները, որոնց շրջանավարտներն ավելի ակտիվորեն էին գրանցվում այս հարթակում, սովորողների հիմնական մասը կազմում են իգական սեռի ներկայացուցիչները, և ընդհանրապես իգական սեռի շրջանավարտներն ավելի ակտիվ են գրանցման գործընթացում: Նրանք ավելի ակտիվ են նաև ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ծրագրերի և շրջանակներում և բուհական այլ տեսակի գործունեության ոլորտներում: Այն աշխատանքի տեսակը,

որը նրանք փնտրում են, առաջին հայացքից շատ ավելի համահունչ է HEN-GEAR-ի կողմից տրամադրված պոտենցիալ զբաղվածության հնարավորություններին: Միննույն ժամանակ, մենք պետք է նշենք, որ արական սեռի շատ շրջանավարտներ պետք է ծառայեն բանակում և չեն համարում HEN-GEAR հարթակում գրանցվելը առաջնահերթություն, ինչպես (թեև սա կարող է կիրառվել 10-15% շրջանավարտների պարագայում, ովքեր ունենին զինվորական ծառայության հետաձգման իրավունք):




Նկար 2. Շրջանավարտների բաշխվածությունն ըստ ծննդավայրի

Նաև հետաքրքիր է ուսումնասիրել գրանցված շրջանավարտների ծննդավայրը: Նկար 2-ից կարող ենք նկատել, որ հարցմանը մասնակցած շրջանավարտների զգալի մասը՝ 54.2%-ը երևանաբնակ է: Մակայն այստեղ առկա են նաև ՀՀ տարբեր մարզերից շրջանավարտներ, մասնավորապես հարցվողների 10%-ը Գեղարքունիքի մարզից են, 8.9%-ը՝ Կոտայքի, 6.2%՝ Արարատի, 1.6%՝ Տավուշից են, 6.3%՝ Արմավիրից, 3.7%՝ Արագածոտնի մարզից են, Շիրակի մարզից՝ 5.3%-ը, , Լոռու մարզից՝ 4.2%-ը, Սյունիքի մարզից՝ 0.5%-ը, իսկ Վայոց Ձորից՝ 1.1%: Հետազոտությանը մասնակցել են նաև այլ երկրներից ժամանած ուսանողներ, որոնց թիվը կազմում է 1.1%:

Այլ քաղաքներից գրանցված ուսանողները գրեթե ընդհանուր քանակի կեսն են, բայց իրականում նրանք ավելի քիչ են: Սրանից երևում է, որ ծագումով ոչ Երևանից ուսանողները ավելի են հետաքրքրված այս պորտալով:

Պիլոտային հետազոտության մեջ ընդգրկվել են շրջանավարտներ ԵՊՀ 18 ֆակուլտետներից: պատկերված է: Բացակայում է միայն Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը:




Նկար 3. Շրջանավարտների բաշխվածությունն ըստ ֆակուլտետների

Շրջանավարտների բաշխումը ներկայացված է նկար 3-ում: Հարկ է նշել, որ կան ֆակուլտետներ, որոնք ԵՊՀ-ում խոշորագույններից են, սակայն նրանց շրջանավարտները այնքան ակտիվ չեն եղել HEN-GEAR հարթակում (օրինակ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, Ինֆորմատիկայի եւ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, Իրավագիտության ֆակուլտետ) և պետք է նշել, որ, ըստ փորձագիտական գնահատման նշված ֆակուլտետների շրջանավարտները համեմատաբար ավելի քիչ խնդիրներ ունեն աշխատաշուկայում:

### 1. ԵՊՀ շրջանավարտների լեզվի իմացությունը

Հետազոտությանը մասնակցած ԵՊՀ շրջանավարտների զգալի մասի մայրենի լեզուն հայերեն է: Այդ ուսանողների թիվը կազմում է հարցվողների 93.7%: Իբրև մայրենի լեզու ուսանողների կողմից նշվել են նաև ռուսերեն լեզուն (0.5%), ավրաներենը (0.5%), և հինդին (0.2%): Սրանք արտասահմանից ժամանաց այն ուսանողներն են, որոնք եկել են ՀՀ կրթություն ստանալու: Ուսանողների 4.7%-ը չի տվել որևէ պատասխան:





Նկար 4. Ուսանողների մայրենի լեզուն

Հետազոտության ընթացքում անդրադարձ է կատարվել ուսանողների առաջին, երկրորդ և երրորդ օտար լեզուների իմացությանը: Առյուսակ 1-ում տրված են այն լեզուները, որոնց տիրապետում են հարցմանը մասնակցած որոշ ուսանողներ: Իբրև առաջին օտար լեզու ուսանողների 56.8 %-ի կողմից նշվել է ռուսերենը, 30.5 % կողմից՝ անգլերենը, 0.5 %-ի համար երկրորդ լեզու է համարվում հայերենը: Երկրորդ օտար լեզվի մասին նշելիս՝ ուսանողների շրջանում ինչպես առաջին օտար լեզվի դեպքում, այնպես էլ այս դեպքում գերակշռում են անգլերենն ու ռուսերենը, սակայն արդեն 55.8 % իբրև երկրորդ օտար լեզու նշել են անգլերենը, իսկ ռուսերենը նշել են ուսանողների միայն 20.5%: Իբրև երկրորդ օտար լեզու ուսանողների կողմից առանձնացվում են նաև ֆրանսերենը (5.8 %), գերմաներենը (5.3 %), իսպաներենը (3.2 %) և այլն: Առաջին և երկրորդ օտար կեզուների մասին հարցերին չեն պատասխանել հարցվողների 10.5 %-ը:

Վերջիններիս թիվը ավելի զգալի է երրորդ օտար լեզվի վերաբերյալ հարցի դեպքում. այս ուսանողների թիվը կազմում է ընդհանուրի 56.3%: Հարցմանը մասնակցած ուսանողների 11.1%-ն իբրև իրենց երրորդ օտար լեզու առանձնացնում են ռուսերենը՝ 7.4 %՝ անգլերեն լեզուն, 7.9 %՝ գերմաներեն լեզուն, 3.2 %՝ ֆրանսերեն լեզուն:

Օտար լեզվի իմացությունը շատ կարևոր նախապայման է հայկական աշխատաշուկայի համար: Գործատուները հաճախ պահանջում են լեզվական հմտություններ և անգլերենի լավ իմացությունը ընձեռում է մի շարք լավ հնարավորություններ:


*Աղյուսակ 1. Օտար լեզուների իմացություն (առաջին, երկրորդ և երրորդ օտար լեզու)*

	Առաջին օտար լեզու	Երկրորդ օտար լեզու	Երրորդ օտար լեզու
Ռուսերեն	56,80%	20,50%	11,10%
Անգլերեն	30,50%	55,80%	7,40%
Գերմաներեն	0,70%	5,30%	7,90%
Ֆրանսերեն	0,50%	5,80%	3,20%
Հայերեն	0,30%		
Իսպաներեն	0,20%	3,20%	5,30%
Հինդի	0,20%	0,90%	0,70%
Իտալերեն		1,60%	-
Թուրքերեն		0,50%	1,10%
Լեհերեն		0,50%	4,20%
Վրացերեն	-	0,50%	1,10%
Արաբերեն	-	0,50%	1,10%
Հուներեն	-		2,60%
Պարսկերեն	-		2,10%
Ճապոներեն	-	-	0,50%
Բուլղարերեն	-	-	0,50%
Չկա պատասխան	4,70%	5,80%	56,30%

Շատ կարևոր է նաև օտար լեզվի իմացության մակարդակը: Շրջանավարտները ուսումնասիրել են օտար լեզուներ, սակայն ունեն որոշակի դժվարություններ բանավոր շփման ժամանակ, ինչպես նաև գրավոր խոսքում: Ուսումնասիրությունը մեծ տեղ է հատկացնում օտար լեզվի իմացությունը հավաստող փաստաթղթի առկայությունը: Հարցվողներից միայն 15% ունի առաջին օտար լեզվի իմացության մասին հավաստող փաստաթուղթ, 10.5%՝ երկրորդ օտար լեզվի իմացությունը հաստատող փաստաթուղթ և 3.6%՝ երրորդ օտար լեզվի մասին հավաստող փաստաթուղթ:


## 2. Շրջանավարտների հմտությունները տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում

Նկար 5, 6 և 7-ում ներկայացված են ԵՊՀ շրջանավարտների SS ոլորտի հմտությունները: Ինչպես կարող ենք տեսնել նկար 7-ում, ԵՊՀ շրջանավարտների 88.4% գերազանց տիրապետում է ինտերնետին (7.9% հիմնականում լավ, 30% լավ, 50.5% գերազանց): Նկար 5-ից երևում է, որ շրջանավարտները հիմնականում լավ են տիրապետում տեքստային մշակմանը՝ 83.2% (10 % հիմնականում լավ, 35.3% լավ, 37.9 գերազանց) և 85.2%-ը լավ տիրապետում է աղյուսակների ստեղծմանը (18.4% հիմնականում լավ, 40% լավ, 26.8% գերազանց) (նկար 6):




Նկար 5. Շրջանավարտներ SS հմտություններ (Օպերացիոն համակարգեր, ծրագրավորման լեզուներ, տեքստային վերամշակում)

Միևնույն ժամանակ հմտությունները տվյալների բազաների, օպերացիոն համակարգերի, ծրագրավորման լեզուների ոլորտներում շատ սահմանափակ են: Հարկ է նշել, որ SS ոլորտում հմտությունների ինքնագնահատումը շրջանավարտների շրջանում հաճախ գերազանցատիպ է: Օրինակ, շատ շրջանավարտներ շատ սահմանափակ հմտություններ ունեն աղյուսակների հետ աշխատելու (MS-Excel և այլ ծրագրեր), սակայն նրանք կարծում են, որ ունեն համապատասխան գիտելիքներ:



Նկար 6. Շրջանավարտներ SS հմտություններ (աղյուսակներ, տվյալների բազաներ, CAD/CAM/CAE design).




Նկար 7 Շրջանավարտներ SS հմտություններ/ վեբ կայքերի ստեղծում, ինտերնետ, տվյալների փոխանցման ցանցեր, մուլտիմեդիա

Կան նաև մտահոգությունները կապված կայքերի ստեղծման հմտությունների հետ: Շրջանավարտների միայն 23,1% ունեն կայքի ստեղծման լավ և գերազանց հմտություններ, իսկ աշխատաշուկան պահանջում է պոտենցիալ աշխատակիցների այս ոլորտում: Իրավիճակը նման է տվյալների փոխանցմանը և մուլտիմեդիա հմտություններին (Նկար 7):


## 2. Տեղեկություններ այն կուրսի մասին, որն այժմ ավարտում են ուսանողները

Հարցված ուսանողների մոտ կեսը (54.2%), նշել է, որ իրենց արդեն հայտնի է, մինչև համալսարան ընդունվելը, թե ինչ գիտելիքներ և հմտություններ են ձեռք բերելու ուսումնառության ընթացքում: Մասնավորապես, 22.6% -ը պատասխանել է «միանշանակ այո» և 31,6% պատասխանեց «ավելի շուտ այո, քան ոչ» հարցին, թե «Մինչև համալսարան ընդունվելը, դուք գիտեիք, թե ինչ գիտելիքներ ու հմտություններ եք պատրաստվում ձեռք բերել ուսումնառության ընթացքում» ( Նկար 8): Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ շրջանավարտների 30.5% -ը պատասխանեց «ավելի շուտ ոչ, քան այո», ինչը նշանակում է, որ մասնագիտական կողմնորոշման հարցում որոշակի խնդիրներ ունեն և բուհը պետք է ավելի ակտիվ լինի այս առումով:




Նկար 8 «Մինչև համալսարանում ընդունվելը, դուք գիտեիք, թե ինչ գիտելիքներ ու հմտություններ եք պատրաստվում ձեռք բերել ուսումնառության ընթացքում» (տոկոս)

Շրջանավարտների զգալի մասը (79.5%) բավարարված են կիրառված ուսումնական մեթոդներով ուսման տարիներին: 29.5% նշում են, որ միանշանակ համաձայն են, իսկ 50% նշում են, որ ավելի շատ համաձայն են (Նկար 9):



Նկար 9. Արդյոք ուսուցման ընթացքում օգտագործված մեթոդները ապահովել են ձեր կողմից ակնկալվող գիտելիքներ ստանալու մակարդակը (տոկոս)


Շրջանավարտների աշխատանքային փորձը վեր է լուծվել ստացված պատասխանների տեղեկատվության հիման վրա: Հարցաշարում այս կապակցությամբ եղել է հետևյալ հարցը. «Արդյո՞ք դուք իրականացրել եք աշխատանքային գործունեություն սովորելու ընթացքում»:



Նկար 10. «Արդյոք դուք իրականացրել եք աշխատանքային գործունեություն սովորելու ընթացքում»

ԵՊՀ շրջանավարտների զգալի մասը (77.4%) ուսման ընթացքում որևէ աշխատանքային գործունեություն չի ծավալել: Ուսանողների միայն 2.1% է աշխատել ամբողջական դրույքով, 7.4%՝ կես դրույքով, իսկ 6.8%-ը աշխատել է պարբերական բնույթ և խիստ սահմանված աշխատաժամեր չունեցող աշխատանքային պայմաններում:

Շրջանավարտների զբաղվածությունն ուսումնասիրվում է ավարտելու պահից (1-2 ամիս ավարտելուց հետո, երբ հարցաշարը լրացվել է): Այն հարցին. «Արդյո՞ք այս պահին ունե՞ք աշխատանք», շրջանավարտների 65,8% -ը բացասական պատասխան է տվել, և միայն 27.4% -ը դրական պատասխան է տվել: Մնացած 6.8% չի պատասխանել այս հարցին (Նկար 11):




Նկար 11 «Արդյո՞ք այս պահին ունե՞ք աշխատանք»

Դիտարկելով այս պատկերը՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ինչպես նշվեց, տեղեկությունը տրամադրվում է միայն ավարտելուց հետո, և շրջանավարտներին պետք է ավելի շատ ժամանակ աշխատանք գտնելու համար, ինչպես նաև բակալավրիատի բազմաթիվ շրջանավարտներ շարունակում են իրենց ուսումը:

### 3. Շրջանավարտների բավարվածությունը ուսումնական գործընթացով

Շրջանավարտների ընդհանուր բավարվածությունը ուսումնական գործընթացով վեր է լուծվել հարցաթերթիկում եղած «Արդյո՞ք դուք ընդհանուր առմամբ գոհ եք ուսումնական գործընթացից»: Շրջանավարտների զգալի մասը բավարարված է ուսուցման գործընթացով: Շրջանավարտների 44.7% նշում են, որ


միանշանակ բավարարված են ուսուցման գործընթացով, իսկ 38.9%՝ ավելի շուտ այո, քան ոչ: Շրջանավարտների միայն 1.1% է, որ բացարձակապես բավարարված չէ ուսուցման գործընթացից և 7.9% պատասխանել է, որ ավելի շուտ ոչ, քան այո:



Նկար 12. «Արդյոք դուք գոհ եք ուսումնական գործընթացից»

Կան նաև շրջանավարտների ուսումնական գործընթացի բավարարվածության գենդերային բաշխման տվյալներ (Նկար 13): Շրջանավարտներն, ընդհանուր առմամբ, գոհ են ուսումնական գործընթացից, և զգալի գենդերային տարբերությունն այստեղ չի նկատվում:






Նկար 13 «Ընդհանուր առմամբ բավարարված եք Ձեր ուսումնական ծրագրով» գենդերային բաշխվածությամբ


Բավարարվածությունը վերլուծվել է թե ուղղակի հարցի հիման վրա («Ընդհանուր առմամբ բավարարված եք Ձեր ուսումնական ծրագրով»), ինչպես նաև այն հարցի հիման վրա, թե «Արդյո՞ք դուք գոհ եք քննություններից, դասախոսական անձնակազմից, վարչական անձնակազմից և ուսանողներից»: Բավարարվածության մանրամասն բաշխումը շատ կարևոր է բացահայտելու «ընդհանուր բավարարվածության» թույլ և ուժեղ կողմերը: Մեծ մասը շրջանավարտների գոհ են ուսանողների, դասախոսների եւ վարչական անձնակազմի հետ իրենց հարաբերություններից, և կրկին բացարձակապես անբավարարված մարդկանց տոկոսը շատ փոքր է (Նկար 14):

Ինչպես նշված է տրամադրված տվյալներում, գոհունակությունը վարչական կազմից ունի նվազագույն արդյունք (47,9% պատասխանել է « միանշանակ այո», 30% պատասխանել է «ավելի շուտ այո, քան ոչ»): Օրինակ, նույն հարցն ուղղված էր ուսուցիչներին՝ 62.1% եւ 25,3% համապատասխանաբար:

Հասկանալի է, որ վարչական անձնակազմի աշխատանքը բարելավման կարիք ունի և հաճախ այդ հանգամանքը կարևոր դեր ունի շրջանավարտների շրջանում բավարարվածության ամբողջական պատկեր կազմելու հարցում:



Նկար 14. Բավարարված էք Ձեր հարաբերություններից...




Նկար 15 «Եթե կարողանայիք նորից ընտրություն կատարել, կդիմեի՞ք բուհ»

«Եթե կարողանայիք նորից ընտրություն կատարել, կդիմեի՞ք բուհ» հարցին ուսանողների 63.7% պատասխանել է, որ կընդունվի միևնույն բուհի միևնույն բաժինը, իսկ 16.3%՝ միևնույն բուհի մեկ այլ բաժին: Շրջանավարտների 11% պատասխանել են, որ կընդունվեին մեկ այլ բուհ (Նկար 15):

#### 4. Տեղեկություններ ընտանիքի մասին

Ինչպես նշված է վերևում, ծնողների կրթական ցենզի վերաբերյալ հարցը հանդիսանում է հիմնական հարցերից մեկը: Վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջանավարտների հայրերի 66.3%-ը և մայրերի 64.7%-ը ունեն աստիճան (բարձրագույն կրթություն): Այդ վիճակագրության գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև՝ *նկար 16-ում*:


Կարևոր է պարզել, թե որքան ամուր է կրթական կապը ծնողների և երեխաների միջև: Վիճակագրական վերլուծություններն ծնողների կրթության և այլ հարցերի միջև կարող է լինել շատ հետաքրքիր, բայց մեր տվյալները չեն ցույց տալիս որևէ հետաքրքիր միտումներ:



Նկար 16 Շրջանավարտների ծնողների կրթական մակարդակը


## 5. Ապագա մտադրությունները և հեռանկարները

Շրջանավարտների մտադրությունները հետբուհական կրթության վերաբերյալ վերլուծվել են նրանց կողմից տրամադրված տեղեկատվությունների հիման վրա, թե արդյոք ունեն ցանկություն շարունակել կրթությունը՝ ընտրելով նույն ողորությունը կամ մեկ այլ: Տվյալները ցույց են տալիս, որ ԵՊՀ շրջանավարտների 83.2%-ը ցանկանում է շարունակել իրենց ուսումը և միայն 6.3%-ը տվել է բացասական պատասխան (Նկար 17):




Նկար 17 «Ցանկանո՞ւմ եք շարունակել ուսումը»

Ուսումը շարունակելու մտադրության հարցում ուշադրության է արժանի նաև նախապատվությունն ըստ գենդերային պատկերի: Իգական սեռի ներկայացուցիչների մոտ այստեղ ավելի մեծ ակտիվություն է դրսևորվում՝ 84.2%-ը ցանկանում է շարունակել ուսումը, մինչդեռ արական սեռի ներկայացուցիչների մոտ այս պատկերը հետևյալն է՝ 75%:




Նկար 18. Կրթությունը շարունակելու մտադրության գենդերային բաշխվածությունը

Միևնույն ժամանակ շատ հետաքրքիր, թե արդյոք շրջանավարտները ցանկանում են շարունակել կրթությունը ԵՊՀ-ում: Շրջանավարտների 58.9% պատասխանել է, որ ցանկանում է շարունակել կրթությունը միևնույն համալսարնում, տվյալ դեպքում՝ ԵՊՀ-ում: Շրջանավարտների 18.4% ցանկանում է ուսումը շարունակել արտերկրում, իսկ ՀՀ-ում ուսումը շարունակել ցանկացող շրջանավարտների միայն 3.7% է ցանկանում սովորել հայկական մեկ այլ համալսարանում (Նկար 19):



Նկար 19 «Որտե՞ղ եք ցանկանում ընդունվել»


Նկար 20-ում կարող ենք տեսնել, որ 163 հարցվածների շրջանում, ովքեր նշել են, որ ցանկանում են շարունակել կրթությունը, 60% բակալավրիատի և 50% մագիստրատուրայի շրջանավարտներ ցանկանում են շարունակել այն նույն համալսարանում, բակալավրիատի 17,5%-ը և մագիստրատուրայի 37,5% ի % -ը ցանկանում են շարունակել իրենց ուսումը երկրի այլ համալսարանում:



Նկար 20. Բակալավրիատի/մագիստրատուրայի շրջանավարտների մտադրությունները ուսումը շարունակելու վերաբերյալ


Ներկայացված են նաև ԵՊՀ այն շրջանավարտների պատասխանները, ովքեր իրենց ուսումը ցանկանում են շարունակել ՀՀ մեկ այլ բուհում: Բբբ բուհ, որտեղ շրջնավարտները ցանկանում են շարունակել ուսումը առանձնացվել են Հայաստանի ամերիկյան համալսարանը (2.1%), Երևանի պետական բժշկական համալսարանը (0.5%), Գեղարվեստի ակադեմիան (0.5%), Կառավարման ազգային ակադեմիան (0.5%): Այս տվյալներից կարելի է ենթադրել, որ բուհի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է ոչ թե բուհով, այլ ոլորտով, քանզի նշված են այնպիսի բուհեր, որոնք ունեն հստակ մասնագիտական ուղղվածություն, բացառությամբ ՀԱՀ-ից, որը

յուրահատուկ է ոչ թե իր մասնագիտական ուղղվածությամբ, այլ արտասահմանյան (ամերիկյան) լինելով (նկար 20):



Նկար 20 Ուսման շարունակումը ՀՀ մեկ այլ բուհում


Շրջանավարտների նախընտրած աշխատանքը հետազոտության առավել էական հարցերից մեկն է: Տրամադրվող տվյալները ցույց են տալիս, որ 40.5%-ը հետազայում ցանկանում են աշխատել պետական սեկտորում, 13.7%-ը՝ մասնավոր, 4,2%-ը՝ զբաղվել ինքնագործունեությամբ կամ ունենալ սեփական գործը և 29.5%-ը չունի ոչ մի նախապատվություն (Նկար 21): Վերջին խումբը (ոչ մի նախապատվություն) շատ մեծ է, և դա կարող է ցույց տալ, որ շրջանավարտները կամ չունեն բավարար գիտելիքներ կամ աշխատաշուկայում գործազրկության բարձր մակարդակը ստիպել է նրանց այդպիսի մոտեցում ցուցաբերել:



Նկար 21. Շրջանավարտների նախընտրելի աշխատանքի բնույթը


Նախընտրելի ոլորտների առումով ԵՊՀ-ն ապահովում է անհրաժեշտ մասնագիտությունները: Շրջանավարտների ամենամեծ խումբը նախընտրում է կրթական ոլորտը (20%): Նաև պետք է նշել, որ այս խմբի մեծ մասը կազմում են մարզերի ներկայացուցիչները, և ակնհայտ է, որ ուսուցիչների աշխատանքը ամենանախընտրելի և հնարավոր տարբերակներից մեկն է: Կա նաև շրջանավարտների մի մեծ շարք, որ ցանկանում է աշխատել միջազգային կազմակերպություններում (16.3%): Հետազոտական ոլորտը, արդյունաբերությունը, ծառայությունները, ֆինանսական հատվածը ևս նախընտրելի ոլորտներում թվում են (Նկար 22):





Նկար 22. Շրջանավարտների նախընտրությունները աշխատանքային սեկտորի հարցում (տոկոս)

Առաջին աշխատանքին անցնելու ժամանակահատվածը նույնպես շատ կարևոր է շրջանավարտների համար: Շրջանավարտների 30.5% կարծում է, որ ավարտելուց հետո աշխատանք կարող են գտնել 1-3 ամիս անց, 16.8%` ավելի քան մի տարի, 15.8%` 4-6 ամիս, 14.7` 6-12 ամիս և 8.9%` մեկ ամսում (Նկար 23):



Նկար 23. Ձեր կարծիքով բուհն ավարտելուց հետո որքա՞ն ժամանակ կպահանջվի աշխատանք գտնելու համար

## Եզրակացություն

Ամփոփելով 2014 թ.-ին իրականացված հետազոտության արդյունքները՝ կարող ենք առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

- Հետազոտությանը մասնակցած ԵՊՀ շրջանավարտների զգալի մասը կազմում են իզական սեռի ներկայացուցիչները: Շրջանավարտների շրջանում գերակշռում են Երևանի բնակիչները:
- Անդրադառնալով շրջանավարտների լեզուների իմացությանը՝ կարող ենք նշել, որ շրջանավարտների մեծ մասի մայրենի լեզուն հայերենն է: Որպես առաջին և երկրորդ օտար լեզուներ՝ ԵՊՀ շրջանավարտների մոտ գերակշռում է հիմնականում երկու լեզու՝ ռուսերենն ու անգլերենը, ընդ որում՝ ռուսերենը նշվել է ավելի շատ որպես առաջին օտար լեզու, իսկ անգլերենը՝ ավելի շատ որպես երկրորդ օտար լեզու:
- ԵՊՀ շրջանավարտների SS գիտելիքների իմացության ոլորտում գերակշռում է հետևյալ ծրագրերի գերազանց իմացությունը՝ ինտերնետ, տեքստի մշակում արդյուսակներ: Նրանց շրջանում այլ գիտելիքներն այս ոլորտում ավելի թույլ են՝ կայքերի պատրաստում, տվյալների փոխանցում և մուլտիմեդիա հմտություններ:
- Հետազոտության արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ ԵՊՀ շրջանավարտների մեծ մասը բավարարված է ԵՊՀ ուսումնական գործընթացից, ինչպես նաև ուսանողների և դասախոսների հետ ունեցած հարաբերություններից: Իսկ վարչական հատվածի աշխատակիցների հետ կապված պետք են բարելավումներ: Բուհում տրված կրթության որակի բավարվածության մասին հավաստում են նաև հարցաթերթիկի մեջ առկա հիմնական հարցերին տրված պատասխանները:
- Ուսումը շարունակելու ցանկություն է հայտնում շրջանավարտների զգալի մասը և հիմնականում նույն բուհում, որը տվյալ դեպքում ԵՊՀ-ն է: Այլ բուհի նախընտրությունը պայմանավորված է ոչ այնքան բուհով, որքան մասնագիտական հատուկ ուղղվածությամբ, ինչը կարելի է նկատել թվարկված բուհերի ցանկից:

- Իգական սեռի շրջանավարտներն ավելի ակտիվ են ուսումը շարունակել ցանկացող շրջանավարտների թվում: Կան նաև շրջանավարտներ, ովքեր ցանկանում են շարունակել իրենց ուսումը այլ համալսարաններում և արտասահմանում: Նրանց մեծ մասը մագիստրատուրայի շրջանավարտներ են:
- Շրջանավարտների կանխատեսումները՝ կապված ապագայում աշխատանք գտնելու հետ, հիմնականում տատանվում են 1-3 ամսվա ընթացքում, ինչպես նաև որոշ մասը գտնում է, որ աշխատանք գտնելու համար բուհն ավարտելուց հետո պետք է մեկ և ավելի տարի:
- Ապագա աշխատանքի վերաբերյալ նախընտրելի ոլորտը շրջանավարտների ավելի քան 40%-ի համար պետական սեկտորն է: Կա նաև շրջանավարտների մի մեծ խումբ, ովքեր նախընտրում են աշխատել միջազգային կազմակերպություններում: Կրթության, հետազոտության, արդյունաբերության, ծառայությունների, ֆինանսների և ապահովագրական ոլորտները ևս նախընտրելիների թվում են: